# ՆՈՐ ԳՐՔԵՐ

Ռուբեն Զարյան. — «Պետրոս Ադամյան — արվեստը», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960, 415 էջ, գինը 1 ռ. 18 կ.:

Ներկա գիրքը հեղինակի «Ադամյան» խորագիրը կրող աշխատության այն մասն է, որ նվիրված է հայ հանճարեղ դերասանի ստեղծագործության և արվեստի վերլուծությանը: Ուրվագծելով մեծ արտիստի բեմական կյանքի ստեղծագործական զարգացումը՝ մելոդրամայից դեպի ռուսական և եվրոպական կլասիկ դրամատուրգիան, հեղինակը կանգ է առնում նրա խաղացանկի գլխավոր դերերի վրա:

Առանձին գլխում քննարկվում են Ադամյանի կերտած կերպարները ռուսական դրամատուրգիայում (Չացկի, Արբենին): Հատուկ ուշադրությամբ են վերլուծված շեքսպիրյան կերպարները, մասնավորապես Ադամյանի Օթելլոն, Լիր Արքան և Համլետը:

Սույն աշխատանքը Ադամյանի ստեղծագործության և արվեստի ծավալուն ու հանգամանալից վերլուծության առաջին փորձն է:

Հայ ժողովրդական պանդխտության երգեր. Տեքստը պատրաստեց, ներածությունը գրեց և ծանոթագրեց Մանիկ Մկրտչյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961, 323 էջ, գինը 70 կ.:

Ներկա աշխատությունը բովանդակում է հայկական ժողովրդական բանահյուսության կարևոր տեսակներից մեկի՝ պանդխտության երգերի գիտական համահավաք տեքստը: Գրքին կցված է ընդարձակ ներածություն, որում տրված է հայ ժողովրդական պանդխտության երգերի ընդհանուր բնութագիրը:

Գրքի հիմնական տեքստում բերված են պարբերական մամուլում, ժողովածուներում, երգարաններում, հանդեսներում գտնված պանդխտության երգերը իրենց տարբերակներով:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանների համար:

# ՆՈՐ ԳՐՔԵՐ

Կ. Ա. Դանիելյան. — «Հայ մեմուարային գրականության պատմությունից». Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961, 228 էջ, գինը 59 կ.:

Սույն աշխատությունը նվիրված է հայ մեմուարային գրականության սկզբնավորման շրջանի (XVIII դ. վերջ և XIX դ. սկիզբ) պատմության ուսումնասիրությանը:

Մեմուարային գրականությունը հանդիսանալով գեղարվեստական գրականության մի առանձին ձև և ուրույն ենթաժանրին, ունի իր առանձնահատկությունները: Հեղինակը ոչ միայն տալիս է հայ մեմուարային գրականության ձևավորման ու զարգացման պատմության հետ կապված հարցերը, այլ միաժամանակ և բացահայտում է մեմուարային գրականության գեղարվեստական առանձնահատկությունները. Նրա տարբեր տարատեսակությունները՝ պատմական անհրաժեշտ էքսկուրս կատարելով մինչև անտիկ շրջանի մեմուարային գրականության փաստերը:

Հեղինակն իր գրքում հանգամանորեն վեր է լուծում հայ մեմուարային գրականության բազմաթիվ նշանավոր նմուշներ, տալիս նրանց պատմական արժեքն ու առանձնահատկությունները:

Է. Վ. Մարտիրոսյան. — «Հայ կանանց սխրագործությունները Հայրենական Մեծ պատերազմի ռազմաճակատներում». Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1961, 92 էջ, գինը 8 կ.:

Ներկա աշխատության մեջ հեղինակը շնորհակալ փորձ է կատարում մեկնաբանելու հայ կանանց հերոսական գործերը Հայրենական Մեծ պատերազմի ռազմաճակատներում, բացահայտելու նրանց անհուն հայրենասիրությունը, նրանց նվիրվածությունը Կոմունիստական պարտիայի գործին, վեր հանելու նրանց հերոսացման հիմքերը և ընդգծելու այն ավանդը, որ հայ կանայք մուծել են ատելի թշնամու—գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած պատմական մեծ հաղթանակի գործում: